

մահուան մէջ երկարատեւ մարզանք մը ու անկէ չվախ-
նալու խնամքով ուսումնասիրուած թեքնիք մը: Տանջան-
քը ու գործովէ վեր ըլլալու հերոսութիւնը, որ հայկական
միաստիքը կը յատկանշէ: Այս զգացումն է, որ մեր գոհ-
ւողներուն անսպառ կարաւանը հանդերձած է, շարժման
սկիզբներուն, երբ ցուցմունք մը, կասկած մը բաւ էին
բանտ, անկէ աքսոր քշելու առտուն կանուխ, խաչը հանող
դռնէն դուրս ելլող հայր) միակտուր տիսիփիին էր մեզի
համար: Այս տիսիփիինէն առաջին ու վերջին հրահանգը
ամէնուն առջեւ ալ հաւասար արժէքով՝ լռութիւն, բա-
ցարձակը սակայն, ամէն բանէ, մա՛նաւանդ չգիտցածէն,
այսինքն՝ դէմինը շուարցնելու մտքով հնարածոյ սուտէն:
Չըլլալ տեսած ու լսած: Այնպէս որ՝ մինչեւ այսօր մութ
են պարագաները, որոնցմէ բռնավար անիկա երեւցաւ
«Սասնոյ լեռներում»: Բարեբա՞ստ, գոնէ հող: Կարեկիտ-
թիւնը չունիմ բաւական ընդլայնումով մօտենալու անոր
գործունէութեան սա նոր շրջանին: Ատիկա առանձին
հատոր մը լեցնող աշխատանք կը նկատեմ ես, աշխա-
տանք, որ վեր է վիպելու ձեռնհասութենէն:

Ուրիշ պատճառներ գիս կ'ընեն վերապահ, որոնցմէ
առաջինը անշուշտ տիպարին երկդիմի, թերի, ու այդ օ-
րերուն անկարելի նկարագիրը: Չեմ կրնար զայն ճշդել,
նոյնացնել Սասնոյ սարերուն վրայ գործող մեզի ծանօթ
միւս մարտիկներուն: Ինչպէս չեմ կրնար անհերքելի
մահն ալ թիւրիմացութիւն ընդունիլ, վասնզի զայն լսած
եմ մուշտակագործ Ղազարէն, որ պատմած է եղերական
դրուագը, իրեն յատուկ սարսափով: Այնպէս որ՝ մնալու
համար առարկայական իրականութեան վրայ, դժուար
է ինծի Մաթիկը գատել իր հեքիաթէն, այսինքն՝ իր բեր-
նով պատմուած առասպելախառն դէպքերուն ու սա ան-
հերքելի միւս ստուգութենէն, - Կովկասէն Պրուսա գտնը-
ւելու իրականութենէն: Հեքիաթի անձնաւորութեան մը
պէս սո՞ւտ: Թերեւս: Ուրե՞մն:

Կը մնամ զգոյշ, ու կու տամ զայն իր իրականու-
թեամբը: Ըսի թէ ինչո՞ւ ճիշդ պիտի չըլլար զայն ընդար-